

ՀԱԿԱ ԲԶԵՅՆ
ԵՒ
ԲԱՋ ԾԻՏԻԿԸ

891.995

7u-64

1.99 Ե

64

Եր

ԽՆԿՈ ԱՊԵՐ

(Ըստ ՁԱԿՆՈՎՍԿՈՒ)

ՀՍԿԱ ԲԶԵԶՆ

== ՈՒ ==

ՔԱՂ ԾԻՏԻԿԸ

Ս. Հ. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1928





ՀՍԿԱ ԲԶԵԶՆ ՈՒ ՔԱԶ ԺԻՏԻԿԸ



Գնում են՝
Արջերը
Հեծանիվով.

Գրանդար № 463բ. հ. 663. Տիրաժ 3000.

Պետհրատի լերկրորդ տպարան Ֆերկանում—1444.



Նրանց հետքով
Կատուն յետքով.



Նրանց հետքով
Մոծակներն
Ողապարիկով.



Նրանց հետքով,
Խեցգետինները
Կաղ շան վոտքով՝



Նրանց հետքով՝
Գայլերն
Եզ ձիով—
Զամբիկով.



Նրանց հետքով
Առյուծներն
Ավտոյով.



Հայ, հայ, հայ,
Շրջիկները
Տրամվայ.



Ե՛լ ավելին՝
 Դողոջը
 Յախավելին:
 Գնում են ու հռհռում,
 Հետն ել գաթա լմլմում:



Մին եր, ահա՛,
 Մեծ տան բակից,
 Դռան տակից,
 Մի աժդահա՛.
 Յերկար բեխերն
 Յերկու մեխեր,
 Դուրս ե գալիս

Մի մեծ Բզեզ,
 Մուր բեխերն
 Եսպես, հնապես,
 Դես-զեն շարժում,
 Մոնչում ե
 Ու զիլ կանչում.
 «Ինչ եք, ինչ չեք,

Մի բան չեք,
 Մի փախչեք.
 Ես ե, ես,
 Ա՛յ հրես,
 Յեկա յես,
 Կուլ տամ ձեզ:



Գազանները զողացին,
Ուշքից, խելքից գնացին,
Գայլերը,
Հնկերաբար,
Կերան իրար:
Կոկորդիլոսը,
Հինգ արշին՝
Հոփ, կուլ ափեց
Դողոշին:
Մայր փիղն ել,
Սհահ,

Նստեց վողնու վրա: Գեղպես մենք ել
 Խոսում են միայն ինքներս
 Խեցգետինները Շարժել գիտենք
 Բաց բերան: Բեխներս»:
 «Տեսեր, տեսեր,
 Նս բեխիին
 Տեր ե զառնում
 Մեր գլխին.
 Մի փնչա, մի վրչա,
 Մերը բեխ չի,
 Բա ի՞նչ ա: Յեվ վիճում են
 Բեխու հետ,
 Յեվ գնում են
 Հետն ել յետ:
 Այ, եղպես, կեցցեք,
 Եղպես բաջ կացեք.



Հեռու կանգնած,
Առանձին,
Ձեն ե տալիս
Գետածին.
— Կոկորդիլոս, այ կետեր,
Բեխլին դառնա գլխի տե՛ր
Ու մեզ անի բնավեր,
Ու մեզ անի տնավեր:

Ով վոր դուրս զա վրեժի,
Կուլի հետը Հրեշի,
Են անվախին,
Են բաշին,
Ձեր բոլորիդ
առաջին՝
Չալիկ-մալիկ,
Ղորթ, զորթ, զորթ,
Ընծա կտամ յերկու գորտ:



Մի նշան ել ավելի,
Բարով-խերով վայելի:

— Մե՞նք վախենանք նրանից.
Քո սնճուռնի Հսկայից:

Ատամներով,
Փանիրներով,
Սմբակներով
Մենք նրան ..

Ով ե, ով
Քո Հսկան:

Գազաններն անթիվ
Դուրս յեկան կոխի:
Արևի տակ փոսկեզոծ
Տղմից յեկան լորդուկ. ոձ.
Նրանց հետն ել քանի գորտ,
Կոկորդիլոս, ծովահորթ:



Բայց տեսնելով
Բեխլուն հենց,
Հայ, հայ, հայ,
Գազանները փորը ու մեծ,
Վայ, վայ, վայ,
Պնւկ, զաշտ ու անտառ
զու անցան.
Սուր բեխերից վախեցան.
Այ, եղպես, կեցցեք,
Եղպես քաջ կացեք:

Նորից գողաց
Գետածին.

— Ամոթ, ամոթ
Ձեր տնձին.
Ռնգեղջյուր, ցուլ, արջեր,
Ի՞նչ եք մտել մուկ փորջեր:
Տվեք քամուն,
Եղ թշնամուն
Առեք պողի,
Դա ի՞նչ կուզի:




— Մենք աստ ենք,
Պատրաստ ենք
Առնել Բզեզին
Մեր պողերին.
Բայց թե թանգ ե, թանգ
Մորթին,
Վայ թե պողերս ել
Զարդին:
Գազանները թփերի տակ
Դողում են,
Ճահիճներում ճմբերի տակ
Սողում են:
Կոկորդիլոսները

Յեղինջներում պահվեցին,
Յեվ փղերը
Հոտած ջրում թաղվեցին:
Կապիկներն, ո՛ր, ինչ տեսակ,
Խլած մի մի պայուսակ՝
Տեղից յելան ու թռան,
Զորս-չորս փոտ ել փոխ առան:
Շնաձուկը հուզվելով,
Գլխի վրա սուզվելով,
Պոչը միայն թողեց ցից,
Ո՛վ ե ասում թե վախից,
Նրա հետքից՝
Պոչին կից,



1002
7348
Խեցգետինն ել ջրածին՝
Են «յետ դարձին», «յետ դարձին»
Կլորվեց, կլորվեց,
Են գնալն ե,
Գլորվեց:

Ահա Բզեզը հաղթող
Դաշտ ու անտառ հանեց դող.
Գազանները—հպատակ,
Գազանները—փոտի տակ:
Գազանների շրջանում



Բեխլի Բզեզն ե շրջում.
Շեկլիկ փորն ե նա մածում,

Հետն ել ինչ ե վժվժում.
— Ձեր ձագերին պահիլ միք,



Բերեք անեմ յես ընթրիք.
Ուտեմ, ուտեմ բոլորին,
Գազանները մոլորին:
Ախ, ինչ տեսակ վատ բան էր.
Խղճուկ, անգոր գազաններ
Կլանչում են, ձեն ածում,
Են անկուշտին անիծում:
Ախր ի՞նչ մայր
Իր ձագին,
Ենքան սիրուն,
Թանկագին,
Կաթով պահած
Մանուկին՝

Արջուկին ու
Փղիկին
Բերի կտա
Ուրիշին՝
Են չար, անկուշտ
Հրեշին,
Վոր չարչարի,
Վոր տանջի.
Գա ու նոր ձագ
Պահանջի:
Հա լալիս են, հա լալիս,
Առանց ձագի տուն գալիս:



Մին ել ահա հերն իրեն
Վազեց յեկավ Պարկերեն.
Ասավ. «Ես ե Մեծ Հսկան,
Հա, հա, հա,
Ես բզեզն ե իսկական.
Կա, կա, կա,
Բզեզ, Բզեզ—մի մըջուն,

Սրանի՞ց եր դուր փախչում:
Սրանց տես,
Ամոթ ձեզ,
Ատամատեր,
Ժանիքատեր,
Ես մժղուկին հպատակ,
Դուր մժղուկի փոտրի տակ»:



Գազանները սարսեցին,
Փսփսալով ասացին.

— Սո՛ւս... եստեղից հեռացիր,
Փորձանք կգա, իմացիր:

Մին ել անա

Վորտեղից՝

Ճմբից, թմբից,

Վոր ճյուղից,

Պստիկ-մստիկ,

Վոստ-վոստիկ,

Թռավ յեկավ մի ծիտիկ.

Ճը՛կ-ճը՛կ-ճը՛կ,

Չը՛ք, չը՛ք, չը՛ք,

Կը՛տ Բզեզին



Ու անա

Բեխլի հսկա

Չիք—չկա:

Հսկան դարձավ փորի դեղ,

Ել ի՛նչ բզեզ, ել ի՛նչ բեխ:

Ինչ յերգում են գազանները,
մի մտիկ,

Ապրես, ապրես, ազատարար
բաջ Ծիտիկ.

Ուռցնելով իրենց յեն-լեն
թշերը՝

Ուրախ, ուրախ գեղգեղում են
Եշերը.

Միրուքներով ճամբա սրբում
Եծերը,

Պար են բռնել գազանների
մեծերը.

Վեր են տնկել յերկար ու կարճ
պոչերը՝


Դրմբ-թրմբ, զրմբ-թրմբ,

Թմբկահարում զոչերը:



Կաշաղակները կշկշում են,
կշկշում,
Գետնի վրա, պարի համար
փող փչում:
Ագռավները կռավում են
դա՛, դա՛, դա՛,
Կուլ գնացիր, Բզեզ աղա.
Բեխլի աղան
Շատ տաք տեղ ա,

Բեխլի աղան
փորի դեղ ա,
դա՛, դա՛, դա՛:
Ձղջիկները
մի մի փուշի
Ձեռներին,
Կտրան վրա
Սկսել են
վերվերին:



Իսկ մայր Փիղը
նազելի՛
Վոր չպարեց
ենզելի՛
Շեկ լուսինը յերկնքում՝

Իր անուշիկ մոր զրկում՝
Ֆնցվեց, դողաց
ու հանկարծ՝
Փղի վրա ընկավ ցած.
Ենտեղից ել՝ ճահճի մեջ:



Լուսնի ընկներ՝
 Հալա հեշ.
 Դժվար գործը
 Դեռ տեղներ.
 Բանը ճանիճ
 Մտներն եր,

Լուսնին ցեխից
 Հանելն եր,
 Տանել տեղը
 Դներն եր,
 Յերկնքիցը
 Մեխերն եր:



ՀՀ Ազգային գրադարան



NL0405045

9845

ԳԻՆՆ Ե 50 ԿՈՊ.